



Տղաների նախընտրության և աղջիկների թերարժեքման կանխարգելմանը ուղղված գլոբալ ծրագիր  
Global Program on Prevention of Son Preference and the Undervaluing of Girls

# ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Թիվ 1, 2017 թ. դեկտեմբեր

## ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ «ԵՐԵՒԱՅԻ ՍԵՌԻ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ, ՀԵՏՆԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴԱՏՃԱՌՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՈՒՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ



2017 թ. նոյեմբերի 10-ից 11-ը Մարդկային զարգացման միջազգային կենտրոնում տեղի ունեցավ Երեւսայի սեռի խտրական ընտրության տարածվածության, հետևանքների և պատճառների արդյունավետ հետազոտության և քաղաքականության վերլուծության խնդիրների վերաբերյալ աշխատաժողով: Աշխատաժողովը հնարավորություն տվեց մասնակիցներին ընդլայնելու գիտելիքները և հմտությունները երեւսայի սեռի խտրական ընտրության տարածվածության, հետևանքների և պատճառների արդյունավետ հետազոտության և քաղաքականության

վերլուծության իրականացման հարցում: Աշխատաժողովին մասնակցեցին Ազգային ժողովի պատգամավորներ, տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, համապատասխան նախարարությունների և գիտահետազոտական կառույցների ներկայացուցիչներ: Աշխատաժողովը կազմակերպվել էր «Տղաների նախապատվության և աղջիկների թերարժեքման կանխարգելմանը ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում:



**ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱՉՄԻ ԴԵՐԸ ԴՏԴԻ ՍԵՌՈՎ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԴՌՈՒԹՅԱՆ ԱՐԶԵՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՅՈՒՄ ԵՎ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԳՐՄԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ**

2017 թվականի նոյեմբերի 15-ին, «Անի պլազա» հյուրանոցի «Անի» սրահում անցկացվեց «Բուժանձնակազմի դերը պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման հարցում և արդյունավետ խորհրդատվության տրամադրման հիմունքները» վերտառությամբ դասընթաց: Մեկօրյա դասընթացին մասնակցեցին Երևանի կանանց կոնսուլտացիաների 45 մասնկարգ-գինեկոլոգ և ուլտրաձայնային հետազոտություն իրականացնող ռադիոլոգներ: Դասընթացին ողջույնի խտրով հանդես եկան ԵՄ պատվիրակության ներկայացուցիչ Լինն Ուրբանը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի խորհրդատու Նարինե Բեգլարյանը և ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ Գայանե Ավագյանը:



«Մենք 800-ից ավել մանկաբարձ-գինեկոլոգ ունենք, և եթե յուրաքանչյուր բուժաշխատող փորձի իր աշխատանքային փարվա ընթացքում գոնե մեկին հետ պահի այդ միքից ու գաղափարից, մենք 800-ից ավելի կորաված կյանքեր կփրկենք: Եվ այդ գիտակցությունն այսօր բոլորն իրենց հետ կարծես թե փարան: Իրենք իրենց կոլեկտիվներում կխոսեն այդ մասին և կփորձեն սրացածը, լսածը փարածել նաև իրենց շրջապարում: ... Եթե հնարավոր լինի, իհարկե, ցանկալի կլինի Երևան քաղաքի խոշոր կենտրոնները ներգրավել, որտեղ հիմնականում կարարվում են արտոբները և այնտեղ խոսել դրա մասին: Ինչպես նաև մարզերը. եթե բոլորը մարզերը չենք կարող, գոնե Գեղարքունիքը և Արագածոտնը, որոնք

սեռով պայմանավորված արտոբների ամենաբարձր մակարդակն ունեն: Գոնե այդ մարզերում բուժաշխատողների, բնակչության, հղիների հետ անենք աշխատանք:»

**Գայանե Ավագյան, ՀՀ ԱԾ աշխատակազմի մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ**

«Ես ինքս գինեկոլոգ եմ, և այդ ինդրի հետ առնչվում ենք երևի թե ամեն օր հայկական իրականությունում: Իսկականից այսօրվա հանդիպումը շատ հետաքրքիր միքեր առաջացրեց նաև՝ մեխանիզմներ, թե ինչպես մենք ինքներս կարող ենք կանխել դա: Ես կուզենամ, որ սա շարունակական լինի՝ այս գործընթացը: Եթե կա նոր ասելիք, որ րեղ հասնի առաջնային օղակի բժիշկներին՝ էլի հրավիրվի ու արվի: Շատ լավ կազմակերպված ու բարձր մակարդակի ու բավականին պրոֆուկտիվ: Կան, որ գնում ես, երբեմն ուղղակի ձևի համար, պրոֆուկտի համար, իսկ սա այդպիսին չէր: Բավականին գործնական էր, անկեղծ, անկաշկանդ միջավայրում, իրար լսելով, ասելով ու քննարկելով: Շատ-շատ լավ էր:»



**Բժշկուհի Արմենուհի Պողոսյան, գինեկոլոգ, թիվ 22 կանանց կոնսուլտացիա**



«*Տպավորությունները շար լավ էին, բավականին*

*արժեքավոր տեղեկություններ ստացվեցին: Հասկացանք, որ բոլորս միասին պետք է թիմային աշխատանք կատարենք, որպեսզի կրճատվի սեռով պայմանավորված արբորյաների թիվը, և Չինաստանի մակարդակի վրա չգտնվենք, այլ ավելի բարձր մակարդակի վրա գտնվենք: Որպես ստնոգրաֆիար, քանի որ հղիության սեռը ասվում է 12 շաբաթականից հետո, պետք է կարողանանք, համենայն դեպս ինչ-որ բանով մենք էլ մեր լուման, մեր ներդրումը ունենալ այդ գործընթացում, կարողանանք համոզել, հասկացնել մարդուն, որ երեխան երեխա է՝ անկախ սեռից, և որ եթե նա արեղծվել է, պետք է անպայման լույս աշխարհ գա: ... Շատ շնորհակալություն կազմակերպիչներին, շար արժեքավոր տեղեկություններ ստացանք, շար լավ էր:»*

*Գոհար Քոչարյան, ստնոգրաֆիար, թիվ 22 պոլիկլինիկա*

**ՍԵՌՈՎ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱՆՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՄՇՏԱԳԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՏԱԿՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

2017 թվականի դեկտեմբերի 4-6-ը Ծաղկաձորում տեղի ունեցավ սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելման և գենդերային հավասարության խթանման ոլորտում ծրագրերի նախագծման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման կարողությունների հզորացման նպատակ ունեցող դասընթաց հասարակական կազմակերպությունների համար:





Եռօրյա դասընթացին մասնակցեցին Երևանի և մարզերի 15 ՀԿ-ների 23 ներկայացուցիչներ: Դասընթացը ինտերակտիվ բնույթ ուներ, օգտագործվում էին խաղեր, խմբային աշխատանքներ և այլն:

Դասընթացին ողջույնի խոսքով հանդես եկավ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանը:

Մասնակիցներին ներկայացվեցին գործնական օրինակներ ծրագրի կառավարման վերաբերյալ, որոնք առնչվում էին գենդերային հարցերին վերաբերող ծրագրերին և նրանց առանձնահատկություններին:

Խմբային աշխատանքներին

զուգահեռ, անցկացվեցին քննարկումներ, որոնց շրջանակներում ներկայացվեցին ՀԿ-ների կողմից իրականացվող աշխատանքները՝ ընդգծելով թե ինչ լուծումներ են տեսնում ներկա մարտահրավերներին դիմակայելու համար:

Ընդհանուր առմամբ, բարձրացված հարցերի շրջանակը և քննարկումները ցույց տվեցին կարողությունների զարգացման դասընթացի կարևորությունը: Պարզաբանվեցին նաև քաղաքացիական հասարակության առջև կանգնած մարտահրավերներին դիմակայելու հնարավորությունները: Մասնակիցները երախտապարտ էին ընձեռված հնարավորության համար և նշեցին նմանատիպ դասընթացների անցկացման անհրաժեշտությունը: Այս դասընթացը նաև հնարավորություն տվեց մասնակիցներին հայտնաբերել ծրագրի կառավարման հարցերում նրանց թույլ տված բացթողումները և ստանալ համապատասխան խորհրդատվություն և աջակցություն փորձագետների կողմից: Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվեցին վկայականներ:



**ԱՈՒՆՅՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՃՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՍԵՌՈՎ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԴԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՆԵՐ**

«Տղաների նախապատվության և աղջիկների թերաբժևորման կանխարգելմանը ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄԶՄԿ) մշակել է մեթոդական ուղեցույցներ սեռով պայմանավորված խտրական ընտրության տարածվածության, հետևանքների ու պատճառների վերաբերյալ քանակական ու որակական հետազոտության և տվյալների վերլուծության իրականացման նպատակով: Փաստաթուղթը մշակվել է համապատասխան գիտահետազոտական կառույցների ակտիվ մասնակցությամբ՝ հիմք ընդունելով նմանատիպ ուղեցույցների մշակման հարցում միջազգային փորձը, մասնավորապես՝ տարբեր երկրների համալսարանների, ԱՀԿ և այլ կառույցների կողմից տվյալների հավաքագրման, վերլուծությունների իրականացման և տվյալների ներկայացման ուղղություններով:

Ուղեցույցները նպատակ ունեն ներդաշնակեցնելու հետազոտությունները, տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, ապացույցների վրա հիմնված քաղաքականությունների և ծրագրերի մշակման հետ, ինչը կնպաստի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելմանը:

Ուղեցույցները կարող են օգտագործվել սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում իրականացվող հետազոտությունների և քաղաքականության վերլուծությունների իրականացման գործընթացում, ինչպես նաև քնակչության և զարգացման ոլորտում իրականացվող ծրագրերում: Ուղեցույցներում ներկայացված են պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության վերաբերյալ հարցերի լայն շրջանակ: Այն նպատակ ունի բավարարել Հայաստանում այդ ոլորտում տվյալների հավաքագրման և վերլուծության համար առկա կարիքները: Ուղեցույցները կարող են նաև մոդիֆիկացվել՝ համապատասխանեցնելու Հարավային Կովկասի և Բալկանյան երկրների կարիքներին:

Մեթոդական ուղեցույցները քննարկվել են մի շարք աշխատաժողովների ընթացքում և վերջնական տեսքով ներկայացվել են դեկտեմբերի 14-ին կայացած աշխատաժողովի ժամանակ: Ոլորտի գիտահետազոտական կառույցների ներկայացուցիչները մասնակցեցին աշխատաժողովին և կարևորեցին մեթոդական ուղեցույցների առկայության անհրաժեշտությունը, ինչպես նաև առաջարկեցին մշակված ուղեցույցների հիման վրա իրականացնել համատեղ հետազոտություն:



## «ՆԷԻ ՃԱՆԱԿԱՐԻՈՂՈՒԹՅՈՒՆԸ» ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄԸ ՃԱՄՓՈՐԴՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«ՆԷԻ ճանապարհորդությունը» տիկնիկային ներկայացումն իր ճամփորդությունը շարունակեց Երևանում և Հայաստանի երեք մարզերում (Արմավիր, Գեղարքունիք և Արագածոտն), որտեղ առավել տարածված է նորածինների սեռով պայմանավորված խտրական ընտրությունը:

Ներկայացումը հյուսված է տարբեր ազգերի հեքիաթներից: Այն ընթանում է աշխույժ, ծիծաղաշարժ, դրամատիկական և երաժշտական ուրախ մթնոլորտում: Ներկայացումը նպաստում է հանդիսատեսի թե՛ ընդհանուր զարգացմանը, և թե՛ աղջիկների ու տղաների, ծնողների և զավակների առողջ համակեցության կարևորության գիտակցմանը, տարիքային տարբեր խմբերի միջև փոխգործակցության, փոխօգնության անհրաժեշտության գաղափարների արմատավորմանը: Ներկայացման ամբողջ ընթացքում կարևորվում է նաև կյանքում մասնագիտություն ձեռք բերելու, արհեստների տիրապետելու, աշխատասիրության նշանակությունը:



ՆԷՆ Աղջիկ երեխայի միջազգային օրվա խորհրդանիշն է Հայաստանում: Նա ծնվել է 2013-ի հոկտեմբերի 11-ին և սկսել իր ճանապարհորդությունը արկածներով լի աշխարհում:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից  
This project is funded by the EUROPEAN UNION